

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

2017 ԹՎԱԿԱՆԻ ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԻ 1-ին ԵՌԱՄՍՅԱԿԻ

ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ

ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Պատասխանատու մարմինը	Ծրագրի կետը	Գերակա խնդիրները	Գերակա խնդրի լուծմանն ուղղվող քայլերը	Կարծիք
<p align="center">ՀՀ կրթության և գիտության նախարարություն</p>	<p align="center">99.</p>	<p>Յուրաքանչյուր ուսումնական հաստատությունում բյուջեի և ծախսերի կատարման վերաբերյալ հաշվետվության հանրային հասանելիության ապահովում</p>	<p>1) ՀՀ բոլոր պետական հանրակրթական ուսումնական հաստատություններում կայքէջերի ստեղծում ՀՀ կառավարության 2016 թվականի հոկտեմբերի 18-ի Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրին հավանություն տալու մասին N 1060-Ա որոշման «Եռամսյա ժամկետում յուրաքանչյուր դպրոցում բյուջեի և ծախսերի կատարման վերաբերյալ հաշվետվության հանրային հասանելիության ապահովում» (1.4 - ա) դրույթի իրականացման միջոցառումների ժամանակացույցից բխող ենթաձրագրերի իրականացման աշխատանքներին ներգրավվել են ՀՀ կրթության և գիտության նախարարության աշխատակազմի հանրակրթության վարչության, ֆինանսատնտեսագիտական և հաշվապահական հաշվառման և հասարակայնության հետ կապերի և տեղեկատվության վարչությունների, ՀՀ կրթության և գիտության նախարարության Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոնի, Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի հանրակրթության վարչության և մարզային կրթության, մշակույթի և սպորտի վարչությունների մասնագետներ:</p> <p>ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատության բյուջեի և ծախսերի կատարման վերաբերյալ հաշվետվության հանրային հասանելիության ապահովման համար ՀՀ կրթության և գիտության նախարարության 2016 թվականի նոյեմբերի 22-ի N 04/07.2/14988-16 գրությամբ ՀՀ հանրակրթական ուսումնական հաստատություններին, ըստ ենթակայության, հանձնարարվել է ստեղծել և գործարկել անհատական կայքէջ, իսկ 2017 թվականի հունվարի 13-ի թիվ 04/07.2/333-17 գրությամբ հանձնարարվել է՝</p> <ul style="list-style-type: none"> • ապահովել հանրակրթական ուսումնական հաստատության 2016 թվականի և 2017 թվականի ընթացիկ եռամսյակների եկամուտների և ծախսերի կատարման վերաբերյալ հաշվետվությունների 	

			<p>տեղադրումը ուսումնական հաստատության կայքէջում,</p> <ul style="list-style-type: none"> • պահովել ՀՀ կրթության և գիտության նախարարի՝ 2015 թվականի մարտի 30-ի 205-Ա/Ք հրամանով հաստատված «Հանրակրթական ուսումնական հաստատությունների տարեկան բյուջեի պլանավորման և բյուջեի տարեկան ծախսերի հաշվետվության կարգի» պահանջների կատարումը՝ սահմանված ժամկետներում: <p>«Եռամսյա ժամկետում յուրաքանչյուր դպրոցում բյուջեի և ծախսերի կատարման վերաբերյալ հաշվետվության հանրային հասանելիության ապահովում» դրույթի իրականացման նպատակով ստեղծվել է «Դպրոցական կայքեր» անվանմամբ կայքէջը՝ http://schoolsite.am/ միջավայրում:</p> <p>«Դպրոցական կայքերում», ըստ մարզերի՝ առանձին էջերով տեղադրված են ուսումնական հաստատությունների կայքերի հղումների ցանկերը:</p> <p>Պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների համապատասխան աշխատակիցներին http://schoolsite.am/ միջավայրում կայքերի ստեղծման, դոմենների տրամադրման, տեխնիկական սպասարկման նպատակով տրամադրվել և տրամադրվում է անհրաժեշտ մասնագիտական խորհրդատվություն:</p> <p>2017 թվականի հունվար ամսի առաջին տասնօրյակում ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություններն ապահովված են եղել անհատական կայքէջերով</p>	
			<p>2) ՀՀ բոլոր պետական հանրակրթական ուսումնական հաստատություններում տարեկան բյուջեի և ծախսերի հաշվետվությունների հրապարակման ապահովում</p> <p>ՀՀ կրթության և գիտության նախարարության ենթակայությամբ գործող ուսումնական հաստատությունների անհատական կայքէջերում տեղադրված են 2016 թվականի եկամուտների և ծախսերի կատարման վերաբերյալ հաշվետվությունները: Երևանի քաղաքապետարանից ստացված գրության համաձայն՝ Երևանի քաղաքապետարանի ենթակայությամբ գործող հանրակրթական ուսումնական հաստատությունների ֆինանսական փաստաթղթերի հանրային հասանելիությունն ապահովված է Yerevan.am կայքի միջոցով: Անհրաժեշտ փաստաթղթերը տեղադրված են նշված կայքի</p>	

		<p><<Քաղաքային տնտեսություն>>, <<Ֆինանսներ>> բաժնի <<Պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների տարեկան ֆինանսական փաստաթղթերի>> ենթաբաժնում:</p> <p><< մարզպետարաններից ստացված գրությունների համաձայն՝ մարզային ենթակայությամբ գործող հանրակրթական ուսումնական հաստատությունների անհատական կայքէջերում տեղադրված են 2016թ. եկամուտների և ծախսերի կատարման վերաբերյալ հաշվետվությունները:</p> <p><< կառավարության 2017 թվականի հունվարի 12-ի N 1222-Ն որոշման N 2 հավելվածի կետ 99-ի (Յուրաքանչյուր ուսումնական հաստատությունում բյուջեի և ծախսերի կատարման վերաբերյալ հաշվետվության հանրային հասանելիության ապահովում) իրականացման ապահովման շրջանակներում << կրթության և գիտության նախարարության 2017 թվականի մարտի 2-ի հ. 01/07.2/2824-17 ելից գրությամբ պետական հանրակրթական ուսումնական հաստատություններին հանձնարարվել է յուրաքանչյուրն իր անհատական կայքէջում տեղադրել 2017 թվականի հաստատված նախահաշիվը և հաստիքացուցակը:</p> <p><< կրթության և գիտության նախարարության ենթակայությամբ գործող ավագ դպրոցների անհատական կայքէջերում տեղադրված են 2017 թվականի հաստատված նախահաշիվները և հաստիքացուցակները:</p> <p>Երևանի քաղաքապետարանի ենթակայությամբ գործող դպրոցների՝ 2017 թվականի հաստատված նախահաշիվները և հաստիքացուցակները տեղադրված են Yerevan.am կայքի <<Քաղաքային տնտեսություն>>, <<Ֆինանսներ>> բաժնի <<Պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների տարեկան ֆինանսական փաստաթղթերի>> ենթաբաժնում:</p> <p><< մարզերից ստացված գրությունների համաձայն՝ մարզային ենթակայությամբ գործող հանրակրթական ուսումնական հաստատությունների՝ 2017 թվականի հաստատված նախահաշիվները և հաստիքացուցակները տեղադրված են դպրոցների անհատական կայքէջերում:</p> <p><< կրթության և գիտության նախարարությունը պարբերաբար մշտադիտարկում է բոլոր դպրոցների կայքէջերը՝ գործընթացը տեսադաշտում պահելու և անհրաժեշտ տեղեկատվությունների հանրային</p>	
--	--	---	--

			<p>հասանելիությունը ապահովելու համար: Հետագա աշխատանքները կընթանան համաձայն նախապես հաստատված ժամանակացույցի:</p>	
	100.	Միջին բեռնվածության և թերբեռնված դպրոցների ֆինանսավորման նոր մեխանիզմի մշակում	<p>1) <u>ուսումնասիրել գործող օրենսդրական դաշտը և առկա պահին կատարված հետազոտությունները</u> Միջին բեռնվածության և թերբեռնված դպրոցների ֆինանսավորման նոր մեխանիզմի մշակման համար ՀՀ կրթության և գիտության նախարարի հրամանով ստեղծվել է աշխատանքային խումբը: Աշխատանքային խումբը վերլուծեք է վերլուծել է հանրակրթական ուսումնական հաստատությունների՝ ըստ աշակերտների թվի ֆինանսավորման բանաձևի արդյունքում ծագող հիմնախնդիրները:</p> <p>2) <u>վերլուծել և սահմանել «միջին բեռնվածության դպրոց» և «թերբեռնված դպրոց» հասկացությունները</u> Վերլուծության արդյունքում խումբը ներկայացրել է մեթոդաբանության նոր առաջարկ՝ ներառելով ֆինանսավորման քաղաքականության բնագավառում որոշ նոր սկզբունքներ ու մոտեցումներ: ՀՀ կրթության և գիտության նախարարության 2017-03-28 01/07.1/4271-17 գրությամբ ՀՀ կառավարություն է ներկայացվել առաջարկվող մեթոդաբանությունը:</p> <p>3) <u>ոսումնասիրել ՀՀ-ում գործող նմանատիպ դպրոցների թիվը և պարզել՝ ինչպիսի խնդիրներ է առաջացնում դպրոցի ուսումնական և ֆինանսական գործընթացում</u> Առաջարկվող ֆինանսավորման բանաձևի յուրաքանչյուր բաղադրիչի հաշվարկման ճշգրիտ ձևը նպատակահարմար է հստակեցնել հանրակրթական ուսումնական հաստատությունների օպտիմալացման գործընթացի ավարտից հետո:</p>	
	101.	Դպրոցի զարգացման ծրագրի կազմման մեթոդաբանության հաստատում և ներդնում	<p>1) <u>աշխատանքային խմբի ձևավորում</u> Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2016թ. դեկտեմբերի 2-ի N 1234-Ա/2 հրամանով ստեղծվել է աշխատանքային խումբ:</p> <p>2) <u>դպրոցի զարգացման ծրագրի կազմման ներկա իրավիճակի գնահատում</u> ՀՀ կրթության և գիտության նախարարությունում հրավիրվել է դպրոցների զարգացման ծրագրի մեթոդաբանության մշակմամբ զբաղվող աշխատանքային խմբի խորհրդակցություն, որը վարել է ԿԳ նախարար Լևոն Մկրտչյանը: Աշխատանքային խմբը հստակեցնել և</p>	

			որոշակիացրել է, թե ինչ բաղադրիչներից է կազմված լինելու զարգացման ծրագիրը: Խորհրդակցության ընթացքում ներկայացվել է «Դպրոց կենտրոնների միության» կողմից մոտ երկու տարի առաջ մշակված դպրոցների զարգացման ծրագրի ուղղեցույցը, որը հիմք է ընդունվել մեթոդաբանության հետագա մշակման համար:	
			3) <u>դպրոցի զարգացման ծրագրի կազմման մեթոդաբանության նախագծի մշակում</u> Ստեղծվել է առցանց հարթակ, որտեղ աշխատանքային խումբը, գնահատելով դպրոցի զարգացման ծրագրի կազմման ներկա իրավիճակը, ներկայացրել է առաջարկություններ Ծրագրի ուղղությունների և ուղղեցույցի բաժինների վերաբերյալ: Ըստ ժամանակացույցի նախագիծը մշակվել է, և ՀՀ կրթության և գիտության նախարարությունում հրավիրված վերջին հանդիպմանը աշխատանքային խումբը ներկայացրեց դպրոցի զարգացման ծրագրի կազմման մեթոդաբանության նախագիծը:	
			4) <u>հանրային քննարկումներ</u> Աշխատանքներն ընթանում են ըստ ժամանակացույցի. նախատեսվում է սկսել հանրային քննարկումների փուլը:	
	102.	Նախակրթարանները 12-ամյա կրթության համակարգում (1+11) ներառելու արդյունավետության ուսումնասիրություն	3) <u>կրթության որակի վրա նախակրթարանը 12-ամյա կրթության համակարգում ներառելու հնարավոր ազդեցության գնահատում</u> Ուսումնասիրության կատարումն ապահովելու նպատակով իրականացվել է միջազգային փորձի ուսումնասիրություն: Ուսումնասիրվել են Ազգային կրթական համակարգերի արդյունավետության վարկանիշավորման ցանկում /կրթական համակարգերի արդյունավետությունը գնահատվել է PISA, TIMSS և PIRLS հետազոտությունների արդյունքներով և բնակչության կրթության մակարդակի աստիճանով ընդգրկված 40 երկրների կրթական համակարգերի առանձնահատկությունները՝ այդ թվում, 1-ին դասարան ընդունվող երեխաների տարիքի և միջնակարգ կրթության տևողության: Ուսումնասիրության արդյունքները ՀՀ կրթության և գիտության նախարարության N 01/07-1/4607-17 2017-04-07 գրությամբ ներկայացվել են ՀՀ կառավարության աշխատակազմ:	
	103.	Գյուղական համայնքներում կրթության որակի և հեղինակության բարձրացմանն ուղղված ծրագրերի, հանրակրթական առարկաների	1) <u>ինտերնետ հասանելիության կապի ապահովում՝ տեսադասերի հասանելիության նպատակով հայկական կրթական միջավայր (armedu.am) կայքի, ինչպես նաև այլ հարթակների միջոցով առցանց դասընթացների,</u>	

		<p>ինքնուրույն սովորելու հնարավորության ընձեռում՝ տեսադասերի հասանելիությունն ապահովելու միջոցով</p>	<p><u>պարապմունքների, մրցույթների, սովորողներին հետաքրքրող հարցերի և առաջադրանքների քննարկումների, ֆորումների կազմակերպում</u> ՀՀ հանրակրթական ուսումնական հաստատություններին առաջարկվել է կիրառելով բնագիտական առարկաներին, մաթեմատիկային վերաբերող էլեկտրոնային ռեսուրսներ՝ օգտվելով http://lib.armedu.am/, http://handbook.ktak.am/ կայքերից յուրաքանչյուր ամիս ՀՀ կրթության և գիտության նախարարությանը տրամադրել ամփոփ տեղեկանք հանրակրթական ուսումնական հաստատությունում անցկացրած տեսադասերի վերաբերյալ:</p>	
			<p><u>2) մենթոր դպրոցների համակարգի փորձարկում և ներդրում՝ 100 գյուղական դպրոցների ընդգրկմամբ</u> Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2016թ. դեկտեմբերի 2-ի N 1237-Ա/2 հրամանով ստեղծվել է աշխատանքային խումբ: Հաշվի առնելով 2016-2017 ուստարվա առաջին կեսին տարբեր դպրոցներում իրականացված հեռավար դասընթացների փորձի վերլուծությունը՝ նախնական փուլում ընտրվել են հանրապետության 11 առաջատար դպրոցներ (մենթոր), որոնք պատրաստ են օժանդակել աջակցության կարիք ունեցող ուսհաստատություններին: 11 դպրոցներին կցված 33 գյուղական դպրոցի (գործընկեր) հետ պարբերաբար իրականացվում են տեսադասեր, ինչպես նաև փոխայցելություններ:</p>	
104.	<p>Բնագիտական առարկաների և մաթեմատիկայի տեսադասերի ապահովում՝ առնվազն 7-8-րդ դասարանների համար</p>		<p>1) <u>առկա տեսադասերի և այլ ռեսուրսների գույքագրում</u> 04.07.2/2846-17, 2017-02-09 և ելից գրություններով շրջաբերականներ են ուղարկվել ՀՀ մարզպետարանների, Երևանի քաղաքապետարանի համապատասխան ստորաբաժանումներ՝ տեղեկացնելու մարզային ենթակայությամբ գործող հանրակրթական ուսումնական հաստատություններին իրականացնել տեսադասեր բնագիտական առարկաներին, մաթեմատիկային վերաբերող էլեկտրոնային ռեսուրսների /http://lib.armedu.am/resource/, http://handbook.ktak.am/ կիրառմամբ և ՀՀ կրթության և գիտության նախարարությանը տրամադրել ամփոփ տեղեկանք մարզային հանրակրթական ուսումնական հաստատություններում անցկացրած տեսադասերի վերաբերյալ:</p>	
			<p>2) <u>էլեկտրոնային ռեսուրսների օգտագործման ուղեցույցի</u></p>	

		<p><u>մշակում և տրամադրում դպրոցներին</u> ՀՀ ԿԳ նախարարության Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոնի կողմից մշակվել և դպրոցներին են տրամադրվել բնագիտական առարկաներին և մաթեմատիկային վերաբերող տեսանյութերի, էլեկտրոնային ռեսուրսների օգտագործման ուղեցույցեր:</p>	
		<p><u>4) Երևանի և ՀՀ մարզերի համապատասխան ստորաբաժանումներից տեղեկատվության հավաքագրում ըստ հիմնական և միջնակարգ հանրակրթական դպրոցներում տեսադասերի անցկացման ժամանակացույցի</u> Երևանի և ՀՀ մարզերի համապատասխան ստորաբաժանումներից իրականացվել է տեղեկատվության հավաքագրում՝ ըստ հիմնական և միջնակարգ հանրակրթական դպրոցներում տեսադասերի անցկացման ձևաչափի և ժամանակացույցի: Նշված ժամկետում ՀՀ կրթության և գիտության նախարարությանը տրամադրվել է Երևանի քաղաքապետարանից և ՀՀ մարզապետարաններից պահանջվող ամփոփ տեղեկանք տեսադասերի անցկացման վերաբերյալ.</p>	
		<p><u>5) ամենամսյա մոնիթորինգի կազմակերպում</u> ՀՀ հանրակրթական ուսումնական հաստատությունների ուսումնական գործընթացը գտնվում է կրթության և գիտության նախարարության մշտադիտարկման կենտրոնում անհրաժեշտ տեղեկատվություն հավաքագրելու համար: Հետագա աշխատանքները կընթանան՝ համաձայն նախապես հաստատված ժամանակացույցի:</p>	
	105.	<p>Կրթական ծրագրերի վերանայում՝ համապատասխանեցնելով արդի պահանջներին՝ ներառելով ձեռնարկատիրության և ֆինանսական կրթության տարրեր</p>	<p>1) <u>մասնագիտական խմբերի ձևավորում, որոնք անմիջականորեն կապված են կրթական տարբեր մակարդակների մեթոդաբանության, պետական չափորոշիչների և ծրագրերի մշակման հետ, պարտադիր և վերջնական արդյունքների, առաջարկությունների նորամուծությունների և ներառական ծրագրերի ներմուծում</u> 2) <u>յուրաքանչյուր ծրագրի համար առարկայական մասնագետների խմբի ձևավորում</u> 2016 թվականի նոյեմբերին Հայաստանի Հանրապետությունում ֆինանսական կրթման ազգային ռազմավարության (ՖԿԱՌ) 2014-2019 թվականների գործողությունների ծրագրի շրջանակներում «ՀՀ կրթության և գիտության նախարարի գրության հիման վրա և «Ֆինանսական կրթումը ուսումնական հաստատություններում» աշխատանքային խմբի ներքո</p>

			<p>ձևավորվել են աշխատանքային ենթախմբեր, որի կազմում ընդգրկված են ՀՀ կրթության և գիտության նախարարության, կրթության ազգային ինստիտուտի, Կենտրոնական բանկի, «Հայաստանի պատանեկան նվաճումներ» կազմակերպության ներկայացուցիչներ և ուսուցիչներ՝ հետևյալ 4 առարկաների մասով՝</p> <ul style="list-style-type: none"> • «Ես և շրջակա աշխարհը», • «Մաթեմատիկա», • «Հանրահաշիվ», • «Հասարակագիտություն»: <p>ՀՀ կրթության և գիտության նախարարի մասնակցությամբ մի շարք քննարկումների արդյունքում որոշվել է ավելացնել ինտեգրման ենթակա ևս մեկ՝ «Տեխնոլոգիա» առարկան, որի համար ևս կազմվել է աշխատանքային խումբ:</p> <p>Աշխատանքային խմբերում ընդհանուր ներգրավված են 12 մասնագետ, յուրաքանչյուր առարկայի գծով մեկ ֆինանսական և ձեռնարկատիրական կրթման մասնագետ, մեկ ֆինանսական ոլորտի փորձագետ և մեկ ուսուցիչ: Ընդգրկվել են նաև հոգեբան, աշխատանքները համակարգողներ ԿԲ-ից և ԿԳՆ-ից՝ ընդհանուր աջակցություն և մշակված փաստաթղթերը ՀՀ կրթական համակարգում գործող իրավական պահանջներին, հոգեբանական կանոններին համապատասխանելիությունը ապահովման նպատակով:</p>	
			<p>3) <u>ներկայացված նյութերի քննարկում և գնահատում</u> 2016 թվականի նոյեմբերի 21-30-ը Գերմանական խնայբանկերի հիմնադրամի աջակցությամբ Հայաստանում էր գտնվում Մեծ Բրիտանիայից ժամանած ֆինանսական կրթման խորհրդատու Սելիա Ալլաբին: Նա աշխատանքային խմբին ներկայացրել է տարբեր երկրների փորձը այս ոլորտում: Աշխատանքային խմբի հետ համատեղ մշակվել է փաստաթուղթ, այն է՝ դպրոցականների ֆինանսական կրթման մատրիցի բաշխումը ըստ առարկաների և դասարանների:</p> <p>Այնուհետև, ըստ բաժինների մշակվել են առարկաներում ֆինանսական և ձեռնարկատիրական կրթման բաղադրիչի ընդգրկման պրոֆորմաներ: 6 հանդիպումների ընթացքում մշակվել են 14 թեմատիկ պրոֆորմաներ, որոնք ընդգրկում էին անհրաժեշտ կոմպետենցիաները, գիտելիքը, հմտությունները, վարքագծը, վերաբերմունքը, ինչպես նաև</p>	

		<p>բովանդակությունը, մեթոդաբանությունը, այլ առարկաների հետ կապը, անհրաժեշտ նյութերը:</p> <p>Հանդիպումներն ամփոփվել են նոյեմբերի 30-ին՝ նիստով, որի ընթացքում միջազգային փորձագետը ներկայացրել է իր փորձագիտական առաջարկները և դիտողությունները: Կազմվել են հետագա քայլերը՝ ավարտել հիմնական 18 բաժինների պրոֆորմաները, վերանայել արդեն իսկ կազմվածները, որի արդյունքում դեկտեմբեր ամսին 2 դպրոցում <<Ես և շրջակա աշխարհը>> առարկայի շրջանակում իրականացվել է փորձարկում՝ հետագա աշխատանքներն ավելի արդյունավետ իրականացնելու համար:</p> <p>Երկուական փորձնական դասեր են անցկացվել «Հասարակագիտություն», «Մաթեմատիկա» և «Հանրահաշիվ», <<Ես և շրջակա աշխարհը>> առարկաների շրջանակներում: Համադրվել են մշակված պրոֆորմաների և սովորողների համար ֆինանսական և ձեռնարկատիրական կոմպետենցիաների մատրիցի բովանդակությունը՝ բացթողումները ընդգծելու և առաջիկայում լրացուցիչ պրոֆորմաներ մշակելու նպատակով:</p> <p>2017 թվականի հունվար ամսվա ընթացքում ֆինանսական կրթումը դպրոցներում ներդրման շրջանակում, ժամանակացույցի համաձայն, կրթական չափորոշիչների և ծրագրերի մշակման աշխատանքային խումբն իրականացրել է հետևյալ աշխատանքները՝</p> <p>Աշխատանքային խումբն ունեցել է 4 հանդիպում, որոնց ընթացքում 4 առարկաների մեջ դուրս են բերվել այն թեմաները, որտեղ հնարավոր է ինտեգրել ֆինանսական և ձեռնարկատիրական կրթման բաղադրիչի տարրերը:</p> <p>Յուրաքանչյուր աշխատանքային ենթախումբ քննարկել, վերանայել, դիտողություններ և առաջարկություններ է ներկայացրել մյուս ենթախմբերի՝ նախկինում մշակված պրոֆորմաների վերաբերյալ:</p> <p>Դիտողությունները և առաջարկությունները քննարկվել են և, առարկայական ենթախմբերը կատարել են համապատասխան ուղղումները:</p> <p>Համադրվել է մշակված պրոֆորմաների և Սովորողների համար ֆինանսական և ձեռնարկատիրական կոմպետենցիաների մատրիցի բովանդակությունը, ընդգծվել են բացթողումները և, ըստ անհրաժեշտության, մշակվել են</p>	
--	--	---	--

			<p>լրացուցիչ պրոֆորմաներ՝ դրանք համապատասխանեցնելով կոմպետենցիաների մատրիցի բովանդակությանը: Փորձնական դասեր են անցկացվել բոլոր առարկաների համար: Քննարկվել են փորձնական դասընթացների ընթացքում առաջացած խնդիրները և հնարավորությունները: Լրամշակվել են մշակված նյութերը: Աշխատանքային խմբերի հանդիպումները պարբերական են՝ շաբաթական 2 անգամ: Հետագա աշխատանքները կընթանան՝ ըստ արդեն հաստատված ժամանակացույցի:</p>	
106.	Արարատյան բակլավրիատի և կրթության գերազանցության ազգային ծրագրի ներառմամբ ազգային կրթակարգի վերջնական ձևավորում	<p>1) <u>հանրակրթական դպրոցներում «Արարատյան բակլավրիատ» ծրագրի մշակում և հաստատում</u> Արարատյան բակլավրիատի և Կրթության գերազանցության ազգային ծրագրի ներառմամբ Ազգային կրթակարգի վերջնական ձևավորման և դրանից բխող Ազգային կրթակարգի նախագծի վերաբերյալ ՀՀ կրթության և գիտության նախարարությունում տեղի է ունեցել քննարկում Համաշխարհային բանկի ներկայացուցիչների հետ: Ելնելով քննարկման արդյունքներից՝ ձեռք է բերվել պայմանավորվածություն առարկայական չափորոշիչները և ծրագրերը մշակել Կրթակարգի հաստատումից հետո: Առաջարկվել է քննարկել այդ գործընթացը համապատասխան կազմակերպությունների ուժերով իրականացնելու նպատակահարմարությունը (անհատ խորհրդատուների փոխարեն) և համաձայնության դեպքում կազմակերպել մրցույթ:</p>		
107.	Համընդհանուր ներառական կրթության ներդրում ՀՀ Լոռու և Տավուշի մարզերում		<p>1) <u>ՀՀ Լոռու և Տավուշի մարզերի հանրակրթական դպրոցների և տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնների շուրջ 5600 մանկավարժական աշխատողի վերապատրաստում</u> ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի և ԱՄՆ ՄԶԳ-ի աջակցությամբ իրականացվող՝ «Խոցելի երեխաների սոցիալական ներառում. Երեխայի խնամքի համակարգի բարեփոխման շրջանակներում այլընտրանքային խնամքի, ընտանիքի աջակցության և ներառական կրթության ծառայությունների ընդլայնում» ծրագրի շրջանակներում կազմակերպվել է վերապատրաստողների վերապատրաստում Լոռու մարզի 162 դպրոցների տնօրենների համար՝ «Ներառական կրթություն, կրթություն բոլորի համար թեմայով»: Ինչպես նաև վերապատրաստվել</p>	

		<p>են 2012 ուսուցիչներ՝ «Ներառական կրթություն, կրթություն բոլորի համար» թեմայով, 30 ժամ տեսական և 30 ժամ գործնական մոդուլային ուսուցման դասընթացով: Համապատասխան վերապատրաստում են անցել նաև 2397 ծնողներ:</p> <p>«Հուլիսի կամուրջ» ՀԿ-ի աջակցությամբ «Միասին ապրել, միասին սովորել» ծրագրի շրջանակներում կազմակերպվել է վերապատրաստողների վերապատրաստում Տավուշի մարզի 81 դպրոցների տնօրենների համար՝ «Ներառական կրթություն, կրթություն բոլորի համար թեմայով»: Նաև վերապատրաստվել են Տավուշի մարզի 81 դպրոցների 2044 ուսուցիչներ և մանկավարժահոգեբանական թիմերի 215 մասնագետներ՝ «Ներառական կրթություն, կրթություն բոլորի համար» թեմայով, 30 ժամ տեսական և 30 ժամ գործնական մոդուլային ուսուցման դասընթացով: Համապատասխան վերապատրաստում են անցել նաև 1764 ծնողներ:</p> <p>Համապատասխան վերապատրաստում են անցել նաև «Հուլիսի Կամուրջ» ՀԿ-ի Տավուշի մարզի 4 գրասենյակների 52 մասնագետներ՝ «Մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների կազմակերպման հմտություններ» թեմայով: Այնուհետև նշված մասնագետներն իրենց հերթին վերապատրաստել են Տավուշի մարզի հանրակրթական դպրոցների մանկավարժահոգեբանական թիմերին: Ներկայումս էլ նրանք աջակցում են հանրակրթական դպրոցներին՝ իրականացնելու կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների՝ առաջին մակարդակի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատումները:</p>	
		<p>2) ՀՀ Լոռու մարզի 3՝ Սպիտակի, Վանաձորի և Ստեփանավանի տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոններից 158 սովորողի տեղափոխում հանրակրթական դպրոց, ՀՀ Լոռու և Տավուշի մարզերի հանրակրթական դպրոցներում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների համար սահմանված ֆինանսավորման բարձրագույն չափաբանակի սանդղակի կիրառում՝ ըստ երեխայի կարիքի ծանրության աստիճանի, մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների և ուսուցչի օգնականի հաստիքի ներդրում</p> <p>Միննույն ժամանակ ՀՀ Լոռու և Տավուշի մարզերում համընդհանուր ներառական կրթության համակարգի ներդրումն ապահովելու նպատակով, քայլեր են ձեռնարկվել</p>	

			<p>նշված մարզերում տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնների ստեղծման ուղղությամբ: Մասնավորապես՝ ՀՀ կառավարության 2017 թվականի հունվարի 12-ի N10-Ն որոշմամբ՝ «Երևանի բժշկահոգեբանամանկավարժական գնահատման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը վերակազմակերպվել է, և բաժանման ձևով ստեղծվել են «Հանրապետական մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոն», «Կապանի տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոն» և «Ստեփանավանի տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունները: Ինչպես նաև ՀՀ կրթության և գիտության նախարարի՝ 2017 թվականի մարտի 1-ի N20-Ա/2 հրամանով ստեղծվել է հանձնաժողով՝ պետական ոչ առևտրային կազմակերպությունների կանոնադրությունների հաստատման և պետական գրանցման աշխատանքները կազմակերպելու նպատակով:</p> <p>ՀՀ կառավարության 2017 թվականի փետրվարի 16-ի N141-Ն որոշմամբ հաստատվել է հանրակրթական հիմնական պետական ծրագրեր իրականացնող պետական ուսումնական հաստատություններում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների համար սահմանված ֆինանսավորման բարձրացված չափաքանակի սանդղակը՝ ըստ երեխայի կարիքի ծանրության աստիճանի: Նույն որոշմամբ 2017 թվականի սեպտեմբերի 1-ից ուժը կորցրած է ճանաչվել ՀՀ կառավարության 2011 թվականի հունվարի 27-ի՝ «Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի հանրակրթական դպրոցներում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթության կազմակերպման համար անհրաժեշտ ֆինանսավորման փորձնական կարգը հաստատելու մասին» N46-Ն որոշումը: Նոր սանդղակը ներդրվել է ՀՀ Սյունիքի մարզում 2017 թվականի հունվարի 1-ից, Լուռու և Տավուշի մարզերում ներդրվելու է 2017 թվականի սեպտեմբերի 1-ից, իսկ մնացյալ մարզերում՝ համաձայն որոշմամբ սահմանված ժամանակացույցի:</p> <p>ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության (ԱՄՆ ՄԶԳ) աջակցությամբ իրականացվող «Ներառական կրթության համակարգի հզորացում Հայաստանում» ծրագրի նախապայմանների համաձայն, մշակվել և ԱՄՆ ՄԶԳ</p>	
--	--	--	---	--

			<p>համաձայնեցման է ներկայացվել 2017 թվականի միջոցառումների իրականացման պլանի և բյուջեի նկարագրական փաթեթը:</p>	
	<p>108.</p>	<p>Իննամյա կրթությունից անցում 12-ամյա պարտադիր կրթության ներառյալ մասնագիտական</p>	<p>1) <u>Նախնական և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում ընդունելության գործընթացի իրավական դաշտի կանոնակարգում</u></p> <p>Նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում պարտադիր 12-ամյա միջնակարգ կրթության անցման կազմակերպման և իրականացման գործընթացի կանոնակարգման նպատակով անհրաժեշտություն է առաջացել փոփոխություն կատարել նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի նոյեմբերի 28-ի «Հայաստանի Հանրապետության նախնական մասնագիտական (արհեստագործական) և (կամ) միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող պետական ուսումնական հաստատություններում ուսանողական նպաստ և պետական կրթաթոշակ տրամադրելու կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի մարտի 1-ի N 297-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1330-Ն որոշման մեջ:</p> <p>Առաջարկվող փոփոխությունը կկարգավորի 2017-2018 ուսումնական տարվանից սկսված մրցութային հիմունքով հիմնական կրթության հիմքով նախնական (արհեստագործական) կամ միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող պետական ուսումնական հաստատություններ մինչև 19 տարին լրանալը ընդունված ուսանողների անվճար ուսուցումը:</p> <p>Նաև առաջարկվում է կիսամյակային առաջադիմության հիման վրա իրականացվող փոխատեղումն իրականացնել ուսումնական տարվա առաջադիմությամբ, ինչպես նաև սահմանվում են առաջնահերթությունները փոխատեղման իրականացման հավասար միավորների դեպքում:</p> <p>Ուստի մշակվել և շահագրգիռ մարմիններին ու հանրային քննարկման է ներկայացվել «Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի նոյեմբերի 28-ի N 1330-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» որոշման նախագիծը:</p>	

			<p>Շահագրգիռ մարմինների հետ համաձայնեցնելուց հետո վերոնշյալ որոշման նախագիծը սահմանված կարգով կներկայացվի ՀՀ կառավարության հաստատմանը, որից հետո արդեն մեկնարկ կտրվի ՀՀ կրթության և գիտության նախարարի 2012թ. ապրիլի 5-ի «Հայաստանի Հանրապետության նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների ընդունելության կարգը հաստատելու մասին» թիվ 254-Ն հրամանում անհրաժեշտ փոփոխություններ կատարելու գործընթացին:</p>	
109.	<p>Բարձրագույն կրթության ֆինանսավորման համակարգի բարեփոխման նպատակով անձեռնմխելի ֆոնդերի ձևավորման օրենսդրական նախադրյալների ստեղծում և բարձրագույն կրթության ֆինանսական նոր մեխանիզմների մշակում</p>	<p>1) <u>բուհական անձեռնմխելի ֆոնդերի ձևավորման և գործառնության միջազգային ու տեղական փորձի ուսումնասիրում (գեկույցի պատրաստում)</u> ՀՀ կրթության և գիտության նախարարի 2016 թվականի դեկտեմբերի 13-ի թիվ 1284-Ա/2 հրամանով ստեղծվել է ՀՀ Բարձրագույն կրթության ֆինանսավորման համակարգի բարեփոխման նպատակով անձեռնմխելի ֆոնդերի ձևավորման օրենսդրական նախադրյալների ստեղծման և բարձրագույն կրթության ֆինանսավորման նոր մեխանիզմների մշակման նպատակով>> աշխատանքային խումբ: Աշխատանքային խմբում ընգրկվել են ՀՀ կրթության և գիտության նախարարության աշխատակազմի և բարձրագույն ուսումնական հաստատությունների ներկայացուցիչներ: Աշխատանքային խմբի կողմից ուսումնասիրվել է անձեռնմխելի ֆոնդերի ձևավորման և գործունեության, ինչպես նաև բարձրագույն կրթության ֆինանսավորման համակարգի միջազգային փորձը:</p>		
			<p>2) <u>բուհական անձեռնմխելի ֆոնդերի ձևավորման իրավական հիմքերի և բուհերի հնարավորությունների ուսումնասիրում (գեկույց)</u> Խմբի կողմից մշակվել են հայեցակարգային մոտեցումներ ՀՀ բուհական համակարգում անձեռնմխելի ֆոնդերի ձևավորման համար անհրաժեշտ պայմանների նախադրյալները: Խմբի կողմից ուսումնասիրվել է ս.թ. հունվարի 17-ին ՀՀ Նախագահի կողմից ստորագրված «Հիմնադրամների մասին» ՀՀ օրենքում համապատասխան փոփոխություններ և լրացումներ, որով սահմանվել և կարգավորվել է անձեռնմխելի կապիտալի ձևավորման և տեղաբաշխման խնդիրները հիմնադրամների համար և</p>	

		դրանով պայմանավորված օրենսդրական նախադրյալների ստեղծումը բարձրագույն ուսումնական հաստատություններում անձեռնմխելի ֆոնդերի ձևավորման համար:	
		3) <u>բուհական անձեռնմխելի ֆոնդերի գործառնության սկզբունքների մշակում և ուղղակի շահառուների (բուհեր, բանկեր) հետ քննարկում (տեղեկանք)</u> Այժմ խումբը նախատեսում է աշխատանքային քննարկումներ ունենալ ՀՀ կենտրոնական բանկի ներկայացուցիչների հետ, իր կողմից մշակած հայեցակարգային մոտեցումները իրավական դաշտում առկա դրույթների համադրման նպատակով:	
	110.	Բուհ-գիտահետազոտական կազմակերպություն համագործակցության ապահովման հնգամյա գործընթացի սկիզբ	1) <u>ցանցային համալսարանների մոդելների ուսումնասիրություն (գեկույցի պատրաստում)</u> ՀՀ կրթության և գիտության նախարարի 13.12.2016թ. թիվ 1283-Ա/2 հրամանով ստեղծվել է աշխատանքային խումբ: Աշխատանքային խմբի կողմից ուսումնասիրվել է ցանցային համալսարանների և գիտակրթական կլաստերների մոդելների ազգային և միջազգային փորձը
			2) <u>ցանցային համալսարանների ստեղծման տեղական մոդելների մշակում (տեղեկանքի պատրաստում)</u> Մշակվել է ՀՀ ցանցային համալսարանների և գիտակրթական կլաստերների ձևավորման հայեցակարգի նախագիծ, որի նպատակն է մշակել Հայաստանի Հանրապետությունում գործող բարձրագույն ուսումնական հաստատությունների և գիտական ու գիտահետազոտական կազմակերպությունների մասնակցությամբ ցանցային համալսարանների և գիտակրթական կլաստերների ձևավորման կարգն ու պայմանները, սահմանել դրանց գործունեության հիմնական ուղենիշները, ֆինանսավորման սկզբունքները և աղբյուրները:
	111.	Դպրոցահասակ երեխաներին կայուն սննդով ապահովման համակարգի ընդլայնում	1) <u>ՀՀ Տավուշի մարզում հանրակրթական դպրոցների տարրական դասարանների և դպրոցին նախապատրաստման խմբերի (նախակրթարանների) 6157 աշակերտի սննդով ապահովման գործընթացի համակարգում</u> 2017 թվականի սեպտեմբերի 1-ից ՀՀ Տավուշի մարզի հանրակրթական դպրոցների տարրական դասարանների շուրջ 6300 աշակերտ կրնդգրկվի ծրագրում: 2) <u>դպրոցական սնունդ ծրագրում ընդգրկված 400 մասնագետի վերապատրաստում</u> Մարզի ուսումնական հաստատությունները Ազգային ծրագրի

			<p>իրականացմանը նախապատրաստելու համար իրականացվել է 75 դպրոցի տնօրենների վերապատրաստում: Դպրոցների խոհարարների վերապատրաստումը նախատեսվում է իրականացնել ապրիլ ամսին:</p>	
			<p>3) <u>«Տավուշի մարզի 25 դպրոցի ենթակառուցվածքների (խոհանոց, ճաշարան) կարգավորման աշխատանքների համակարգում</u> Մարզի 51 դպրոցներին ՊՀԾ-ն կտրամադրի ֆինանսավորում՝ դպրոցում ճաշարանների վերանորոգման և անհրաժեշտ գույք ձեռքբերելու համար: Դպրոցների կարիքների գնահատման աշխատանքները ընթացքում են:</p>	
			<p>4) <u>«Տավուշի մարզի 75 դպրոց անհրաժեշտ խոհանոցային սարքավորումներով և ճաշարանային գույքով ապահովելու գործընթացի համակարգում</u> Հանրակրթական դպրոցների կարիքների գնահատման աշխատանքներն ընթացքում են, որոնց արդյունքում Տավուշի մարզի 75 դպրոցներից 24-ին կտրվեն խոհանոցային սարքավորումներ: Մարզի հանրակրթական դպրոցներում ներդրումների ընդհանուր ֆինանսավորումը կկազմի 200 հազար ԱՄՆ դոլար:</p>	

